ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.02.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-ԷՍ-2019/04

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննելով Վարազդատ Հայրապետյան Բարիսի Ա/Ձ-ի (այսուհետ՝ նաև Ա/Ձ) կողմից 15.01.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. Վարազդատ Հայրապետյան Բարիսի Ա/Ձ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

Վարազդատ Հայրապետյան Բարիսի Ա/Ձ-ն 15.01.2019թ. Բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Եղեգնաձորի թիվ 1 միջնակարգ հիմնական դպրոց ՊՈԱԿ-ի կողմից 13.12.2018թ. հայտարարվել սննդամթերքի ձեռքբերման նպատակով ՎՁՄԵ1-ԳՀԱՊՁԲ-2019/01 ծածկագրով գնման ընթացակարգ (Այսուհետ՝ Ընթացակարգ), որի հայտերի բացումը տեղի է ունեցել 20.12.2018թ.: Ի դեմս մի շարք ընկերությունների նույն ծածկագրով գնման ընթացակարգին (20.12.2018թ) հայտ է ներկայացրել նաև Վարազդատ Հայրապետյան Բարիսի Ա/Ձ-ն (Այսուհետ՝ Ա/Ձ) և 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 10-րդ, 14-րդ, 16-րդ, 17-րդ, 19-րդ, 20-րդ և 22-րդ չափաբաժինների մասով ճանաչվել էր առաջին տեղ զբաղեցնող:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 26.12.2018թ. հարցում է կատարվել ՀՀ պետական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ի պատասխան վերը նշված հարցման ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացվել է եզրակացություն, համաձայն որի Ա/Ձ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (20.12.2018թ.) ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություն՝ 12,000 ՀՀ դրամի չափով:

Հայտնում եմ, որ Ա/Ձ-ի մոտ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ առկա ժամկետանց հարկային պարտավորությունը առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարման գծով:

Հարկ եմ համարում նաև նշել, որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 19.07.2017թ. թիվ 228-Ն հրամանի (առկա է նաև Arlis համակարգում) համաձայն՝ սահմանվել է վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձև, որտեղ որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն վճարման ենթակա դրոշմանիշների վճարը ընդհանրապես նախատեսված չէ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի արդեն 11.04.2018թ. թիվ 245-Ն հրամանի համաձայն սահմանվել է վերասկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի նոր ձև, որտեղ որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն վճարման ենթակա դրոշմանիշների վճարը նույնպես նախատեսված չէ:

Միաժամանակ հայտնում եմ, որ «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքի համաձայն Ա/Ձ-ն 20.12.2018թ. դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունի, այլ ունի գերավճար (միասնական հաշվում առկա գումար) 192.006 ՀՀ դրամ գումարի չափով:

Հայտնում եմ նաև, որ Ա/Ձ-ն թույլ չի տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի խախտում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ նաև՝ կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ»

որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Նույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշում¬ները գնումների բողոքարկման խորհրդին:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ խորհուրդը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման,

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ բողոքի քննությունը բաց է հանրության համար, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների: Բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին խորհուրդը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Այսպիսով, Վարազդատ Հայրապետյան Բարիսի Ա/Ձ-ն գտնում է, որ բավարարել է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված պահանջներին, քանի որ տվյալ դեպքում, Վարազդատ Հայրապետյան Բարիսի Ա/Ձ-ն ՎՁՄԵ1-ԳՀԱՊՁԲ/2019/01 ծածկագրով ընթացակարգի արդյունքում՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացնելու պայմաններում ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից, սակայն Կոմիտեի կողմից տրված եզրակացության պատճառով զրկվել է պայմանագիր կնքելու հնարավորությունից, դրանով իսկ «մեկուսացվելով» պայմանագրի կողմ հանդիսանալուց:

Գտնում ենք, որ Ա/Ձ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ իրականում չի ունեցել, քանի որ, ինչպես արդեն նշվել է Ա/Ձ-ն հիմք ընդունելով իր կողմից սահմանված պարտավորությունների գումարի չափից ավել գումար վճարելու հանգամանքը հայտ է ներկայացրել և մասնակցել է Ընթացակարգին:

Սակայն, այստեղ իսպառ բացակայում է Վարազդատ Հայրապետյան Բարիսի Ա/Ձ-ի կողմից ներկայացված որևէ հայտարարություն իրականությանը չհապատասխանող լինելու հանգամանքը, քանի որ Ա/Ձ-ն գործողություններում որևէ միտում կամ դիտավորություն չի եղել չկատարելու հարկային պարտավորությունները:»:

Վարազդատ Հայրապետյան Բարիսի Ա/Ձ-ն Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքով խնդրել է.

1. Պարտավորեցնել «Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի սննդամթերքի նպատակով հայտարարված ՎՁՄԵ-ԻԳՀԱՊՁԲ-2019/01 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 14.01.2019թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 2 և 3.1.2 կետերով Ա/Ձ Վարազդատ Հայրապետյան Բարիսի հայտը մերժելու մասին կայացած որոշումները և սույն որոշումներից հետո կայացված ցանկացած այլ որոշում:

2. Պարտավորեցնել «Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի սննդամթերքի նպատակով հայտարարված ՎՁՄԵ-ԻԳՀԱՊՁԲ-2019/01 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին Ա/Ձ Վարազդատ Հայրապետյան Բարիսի հայտը գնահատել ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Վարազդատ Բարիսի Հայրապետյանը:

2. «Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.

«Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) Վարազդատ Հայրապետյան Բարիսի Ա/Ձ-ի կողմից 15.01.2019թ. Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի վերաբերյալ 17.01.2019թ. գրությամբ հայտնել է հետևյալը:

««Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված ՎՁՄԵ-ԻԳՀԱՊՁԲ-2019/01 ծածկագրով սննդամթերքի գնման ընթացակարգում Վարազդատ Հայրապետյան Բարիսի Ա/Ձ-ն 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 10-րդ, 14-րդ, 16-րդ, 17-րդ, 19-րդ, 20-րդ, 22-րդ, չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից: Առաջնորդվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝ 43-րդ կետի 3-րդ մասով, հարցում է ներկայացրել ՀՀ պետական եկամուտների կոմիտե: Տրամադրված եզրակացության արդյունքում պարզվել է, որ մասնակիցը ունի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություն:

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝ 44-րդ կետի Վարազդատ Հայրապետյան Բարիսի Ա/Ձ-ի հայտը մերժվել է:»:

«Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն ՊՈԱԿ-ի կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. <u>ԳԲՔԱ-ԷՍ-2019/04 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Վարազդատ Հայրապետյան Բարիսի Ա/Ձ-ի (այսուհետ՝ նաև Ա/Ձ) կողմից 15.01.2019թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ՎՁՄԵ-ԻԳՀԱՊՁԲ-2019/01 ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր) ՎՁՄԵ-ԻԳՀԱՊՁԲ-2019/01 ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 26.12.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 3 և 14.01.2019թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրությունները, 20.12.2018թ. դրությամբ Ա/Ձ-ի՝ «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 18.01.2019թ. Վարազդատ Հայրապետյան Բարիսի Ա/Ձ-ին տրված տեղեկանքը, Ա/Ձ-ի կողմից Ընթացակարգին ներկայացված մասնակցության հայտի պատճենը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 08.01.2019թ. տրված եզրակացությունը.

«Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար՝ սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՎՁՄԵ-ԻԳՀԱՊՁԲ-2019/01 ծածկագրով գնանշման հարցում, (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև Վարազդատ Հայրապետյան Բարիսի Ա/Ձ-ն:

Ընկերության կողմից առաջարկված գնային առաջարկը 3-րդ չափաբաժնի կազմել է 330.600 ՀՀ դրամ, 4-րդ չափաբաժնի համար՝ 150.500 ՀՀ դրամ, 5-րդ չափաբաժնի համար՝ 124.000 ՀՀ դրամ, 6-րդ չափաբաժնի համար՝ 504.000 ՀՀ դրամ, 7-րդ չափաբաժնի համար՝ 122.500 ՀՀ դրամ, 8-րդ չափաբաժնի համար՝ 154.000 ՀՀ դրամ, 10-րդ չափաբաժնի համար՝ 95.000 ՀՀ դրամ, 14-րդ չափաբաժնի համար՝ 153.000 ՀՀ դրամ, 16-րդ չափաբաժնի համար՝ 328.000 ՀՀ դրամ, 17-րդ չափաբաժնի համար՝ 598.000

ՀՀ դրամ, 19-րդ չափաբաժնի համար 364.000 ՀՀ դրամ, 20-րդ չափաբաժնի համար 297.540 ՀՀ դրամ, 22-րդ չափաբաժնի համար 492.480 ՀՀ դրամ:

Ա/Ձ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում ՎՁՄԵ-ԻԳՀԱՊՁԲ-2019/01 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովը 26.12.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության.

- 5.2 կետով որոշել է Ընթացակարգի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 10-րդ, 14-րդ, 16-րդ, 17-րդ, 19-րդ, 20-րդ, 22-րդ, չափաբաժինների մասով Վարազդատ Հայրապետյան Բարիսի Ա/Ձ-ին ճանաչել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

- նույն արձանագրությամբ, որոշել է հարցում ներկայացնել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե առաջին տեղ զբաղեցրած մասկնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 08.01.2018թ. տրամադրած եզրացության համաձայն՝ Վարազդատ Հայրապետյան Բարիսի Ա/Ձ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց պարտավորություն՝ 11.000 ՀՀ դրամ գումարի չափով:

Հանձնաժողովը 14.01.2019թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրության 3.1.2 կետով հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետը, որոշել է Վարազդատ Հայրապետյան Բարիսի Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտը 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 10-րդ, 14-րդ, 16-րդ, 17-րդ, 19-րդ, 20-րդ, 22-րդ, չափաբաժինների մասով մերժել:

Բողոքի քննության նպատակով կայացած նիստի ժամանակ Վարազդատ Հայրապետյան Բարիսի Ա/Ձ-ն Բողոքներ քննող անձին հայտնեց, որ ՎՁՄԵ-ԻԳՀԱՊՁԲ-2019/01 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 08.01.2019թ. տրամադրած եզրակացության համաձայն՝ Վարազդատ Հայրապետյան Բարիսի Ա/Ձ-ն

հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (20.12.2018թ.) ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն՝ 11.000 ՀՀ դրամ գումարի չափով: Ընկերությայն ներկայացուցիչը հայտնեց նաև, որ արձանագրված ժամկետանց պարտավորությունը ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 18.01.2019թ. Վարազդատ Հայրապետյան Բարիսի Ա/Ձ-ին տրված տեղեկանքի համաձայն, գոյացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն վճարման ենթակա դրոշմանիշային վճարների գծով: Վարազդատ Հայրապետյան Բարիսի Ա/Ձ-ն հավելեց նաև, որ «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքի համաձայն՝ հայտը ներակայացնելու օրվա (20.12.2018թ.) դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չունի, հետևաբար հիմք ընդունելով «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» տվյալները և վստահ լինելով, որ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ պարտավորություններ չունի, մասնակցության հայտ է ներկայացրել:

Միաժամանակ Ա/Ձ-ն Բողոքներ քննող անձին ներկայացրեց հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» 20.12.2018թ. դրությամբ քաղվածքը, որի համաձայն՝ Ա/Ձ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չունի, ինչպես նաև ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 18.01.2019թ. Վարազդատ Հայրապետյան Բարիսի Ա/Ձ-ին տրված տեղեկանքը, որի համաձայն արձանագրված պարտավորությունը դրոշմանիշային վճարների գծով է:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանված են վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների հետևյալ հարկատեսակները՝ ԱԱՀ, շահութահարկ. եկամտային հարկ, ակցիզային հարկ, շրջանառության հարկ, արտոնագրային հարկ, բնապահպանական հարկ, ոչ ռեզիդենտի շահութահարկ, սոցիալական վճար, պետական տուրք, բնօգտագործման վճար, այլ հարկային եկամուտներ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված

մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.

• 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

• 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

«Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար՝ սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված ՎՁՄԵ-ԿՀԱՊՁԲ-2019/01 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի՝

• 7.12 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական

եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև սույն հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում նույն ենթակետում հարցումն ուղարկվում է Lena_Najaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին նույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով karine_sargsyan@taxservice.am, gor_mkrtchyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.

• 7.14 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 7.12 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին սույն հրավերի 9-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում սույն հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջներին և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն հրավերի 1-ին մասի 7.19 կետի 2-րդ ենթակետով նախատեսված ընթացակարգը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 08.01.2018թ. Հանձնաժողովին ներկայացրած եզրակացության համաձայն՝ Վարազդատ Հայրապետյան Բարիսի Ա/Ձ-ի ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա (20.12.2018թ.) դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների գումարը կազմել է 11.000 ՀՀ դրամ:

- Վարազդատ Հայրապետյան Բարիսի Ա/Ձ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունը առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշայինի վճարների գծով:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանվել են վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևը, որտեղ՝ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշայինի վճարը որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն, նախատեսված չէ:

- Վարազդատ Հայրապետյան Բարիսի Ա/Ձ-ն հայտը ներակայացնելու օրը առաջնորդվել է «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» տվյալներում առկա տեղեկատվությամբ, որի համաձայն՝ հայտը ներակայացնելու օրվա (20.12.2018թ.) դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով որևէ պարտավորություն առկա չէ:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ Վարազդատ Հայրապետյան Բարիսի Ա/Ձ-ի գնման գործընթացին հետագա մասնակցության դադարեցումը պայմանավորված է եղել Ընկերության իրազեկված չլինելու հանգամանքով, քանի որ Ընկերությունն արձանագրված հարկային պարտավորության առկայության վերաբերյալ տեղեկությունը կարող էր ձեռք

բերել բացառապես Ընկերության՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքի տվյալներում առկա տեղեկատվությունից:

Բողոքներ քննող անձը գտնում է նաև, որ տվյալ դեպքում արձանագրված պարտավորությունը չի կարող դիտարկվել Վարազդատ Հայրապետյան Բարիսի Ա/Ձ-ի՝ հայտը ներակայացնելու օրվա (20.12.2018թ.) դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վարազդատ Հայրապետյան Բարիսի Ա/Ձ-ի կողմից 15.01.2019թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի:

2. Պարտավորեցնել «Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի սննդամթերքի նպատակով հայտարարված ՎՁՄԵ-ԿՀԱՊՁԲ-2019/01 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել՝

- 14.01.2019թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 2-րդ և 3.1.2 կետերով Վարազդատ Հայրապետյան Բարիսի Ա/Ձ-ի հայտը մերժելու մասին կայացած որոշումը դադարեցնելու մասին համապատասխան որոշում:
- Վարազդատ Հայրապետյան Բարիսի Ա/Ձ-ի հայտը ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան գնահատելու մասին համապատասխան որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ